ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		03.08.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճզմաչյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		03.08.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Սարգսյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		03.08.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		03.08.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	**Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան	**Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ**		03.08.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	**Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ**		03.08.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- Կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 210.4 մլրդ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 9.8%-ով (18.8 մլրդ. ՀՀ դրամով):

Այդ թվում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Պահանջները բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ աճել են 143.6%-ով (14.7 մլրդ. ՀՀ դրամով), Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները՝ 34.5%-ով (8.2 մլրդ. ՀՀ դրամով), Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներն աճել են 23.6%-ով (459.9 մլն. ՀՀ դրամով), Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվները՝ 7.1%-ով (360.8 մլն. ՀՀ դրամով), Հաճախորդներին տրված վարկերը և այլ փոխատվությունները՝ 3.0%-ով (3.4 մլրդ. ՀՀ դրամով) և Այլ ակտիվները՝ կրճատվել 68.8%-ով (3.8 մլրդ. ՀՀ դրամով):

2018 թվականի երկրորդ եռամսյակում ակտիվները նախորդ եռամսյակի նկատմամբ կրճատվել են 0.4%-ով (800.5 մլն. ՀՀ դրամով): Վերջինս հիմնականում պայմանավորված է Այլ ակտիվներ հոդվածի գծով 67.6% (3.6 մլրդ. ՀՀ դրամ), Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների 20.2% (8.1 մլրդ. ՀՀ դրամ), Կանխիկ դրամական միջոցներ և ՀՀ Կենտրոնական բանկում մնացորդների 15.1% (3.9 մլրդ. ՀՀ դրամ) և Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվների 2.3% (127.4 մլն. ՀՀ դրամ) նվազմամբ: Պահանջները բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ աճել են 72.07%-ով (10.5 մլրդ. ՀՀ դրամով), Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվները՝ 10.6%-ով (230.9 մլն. ՀՀ դրամով), իսկ Հաճախորդներին տրված վարկերը և այլ փոխատվությունները՝ 1.1%-ով (1.2 մլրդ. ՀՀ դրամով):

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ապահովվել է հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների բնականոն աճ՝ մնացորդները կազմելով 118.8 մլրդ. ՀՀ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմել է 3.0% (3.4 մլրդ. ՀՀ դրամ), իսկ 31.12.2017թ.-ի համեմատ ցուցանիշը նվազել է 0.3%-ով (397.4 մլն. ՀՀ դրամ):

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և վերջիններիս մեծամասնությունը դասակարգված է որպես ստանդարտ վարկ, ինչը վկայում է Բանկում վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների մնացորդները կազմել են 32.1 մլրդ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 34.5%-ով (8.2 մլրդ. ՀՀ դրամով), իսկ 31.12.2017թ.-ի համեմատ աճել են 9.7%-ով (2.8 մլրդ. ՀՀ դրամով):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 31 մլրդ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 90.8 մլրդ. ՀՀ դրամի դիմաց:

Արտարժութային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժութային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 192.6 մլն. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 15 մլրդ. ՌԴ ռուբլի,

Եվրոյով գործարքների ծավալը՝ 146.6 մլն. եվրո:

Վերը նշված արտարժութային գործառնություններից հաշվետու եռամսյակում ստացված եկամուտը կազմել է 267 մլն. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 216.6 մլն. ՀՀ դրամի դիմաց:

Պարտավորություններ

2018թ.-ի երկրորդ եռամսյակի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 174.2 մլրդ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 10.6%-ով (16.7 մլրդ. ՀՀ դրամով), իսկ 31.12.2017թ.-ի համեմատ կրճատվել են՝ 1.7%-ով (3.1 մլրդ. ՀՀ դրամով):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պարտավորությունների աճը պայմանավորված է Բանկի կողմից թողարկված արժեթղթերի 212.6% (8.1 մլրդ. ՀՀ դրամ), Վճարվելիք գումարների գծով 86.74% (50.8 մլն. ՀՀ դրամ), Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 49.3% (28.3 մլրդ. ՀՀ դրամ) և Այլ պարտավորությունների 87.8% (790.5 մլն. ՀՀ դրամ) աճով: Միևնույն ժամանակ, Հետաձգված հարկային պարտավորությունները կրճատվել են 63.5%-ով (104.7 մլն դրամով), իսկ Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները՝ 21.5%-ով (20.4 մլրդ. ՀՀ դրամով):

2018թ.-ի առաջին եռամսյակի նկատմամբ պարտավորությունները կրճատվել են 0.5%-ով (919.4 մլն. ՀՀ դրամով), որը պայմանավորված է Հաճախորդների նկատմամբ պարտավորություններ 8.7% (7.1 մլրդ. ՀՀ դրամ), Բանկի կողմից թողարկված արժեթղթերի՝ 5.7% (713.7 մլն. ՀՀ դրամ) կրճատմամբ: Իսկ նախորդ եռամսյակի նկատմամբ Պարտավորությունները բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ աճել են 9.0%-ով (7.1 մլրդ. ՀՀ դրամ), Վճարվելիք գումարները՝ 13.1%-ով (12.6 մլն. ՀՀ դրամով):

31.12.2017թ-ի համեմատ պարտավորությունների 1.7% (3.1 մլրդ. ՀՀ դրամ) կրճատումը պայմանավորված է Հետաձգված հարկային պարտավորությունների 49.3% (58.4 մլն ՀՀ դրամ), Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 22.1% (21.2 մլրդ. ՀՀ դրամ) և Այլ պարտավորությունների՝ 10% (187.1 մլն. ՀՀ դրամ) կրճատմամբ: Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների նվազումը մեծապես պայմանավորված է Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի և դրսից ներգրավված միջոցների աճով:

Ընդհանուր կապիտալ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 36.1 մլրդ ՀՀ դրամ, որը 31.12.2017թ. համեմատ աճել է 2.8%-ով (978.2 մլն. ՀՀ դրամով): Ընդհանուր կապիտալի կազմում չբաշխված շահույթի աճը նախորդ տարվա ավարտի նկատմամբ կազմել է 6.0% (բացարձակ արտահայտությամբ՝ 867.5 մլն ՀՀ դրամ):

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտները աճել են 0.3%-ով (11.4 մլն. ՀՀ դրամով)՝ կազմելով 3.9 մլրդ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների զգալի մասը բաժին է ընկնում Հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից (3.1 մլրդ. ՀՀ դրամ կամ 78.6%), Պարտքային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտներին (605.5 մլն. ՀՀ դրամ կամ 15.4%), Ռեպո պայմանագրերից ստացված տոկոսային եկամուտներին (123.9 մլն. ՀՀ դրամ կամ 3.1%) ու Բանկի ընթացիկ հաշիվներից, Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից ստացված տոկոսային եկամուտներին (92.4 մլն. ՀՀ դրամ կամ 2.3%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարներից ստացված զուտ եկամուտները կազմել են 143.3 մլն. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 13.4%-ով (22.2 մլն. ՀՀ դրամով):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է 2018 թվականի երկրորդ եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

հազ. ՀՀ դրամ

	2018 թվականի 2-րդ եռամսյակ	**2017 թվականի 2-րդ եռամսյակ**
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3,941,419	3,930,012
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(2,140,666)	(2,135,822)
Զուտ տոկոսային եկամուտ	**1,800,753**	**1,794,190**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	341,060	329,290
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(197,788)	(163,863)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	**143,272**	**165,427**
Եկամուտ շահաբաժիններից	-	-
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	287,979	280,134
Այլ գործառնական եկամուտ	126,860	205,141
Գործառնական եկամուտներ	**414,839**	**485,275**

Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	17,098	(85,998)
Ընդհանուր վարչական ծախսեր	(1,209,566)	(1,179,077)
Այլ գործառնական ծախսեր	(536,578)	(480,378)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	**629,818**	**699,439**
Շահութահարկի գծով ծախս	(165,462)	(82,144)
Շահույթ հարկումից հետո	**464,356**	**617,295**

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 2.1 մլրդ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.2%-ով (4.8 մլն. ՀՀ դրամով): Տոկոսային ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում Բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդների և վարկերի դիմաց կատարված ծախսերին (1.3 մլրդ. ՀՀ դրամ կամ 62.3%), Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց կատարված տոկոսային ծախսերին (603.9 մլն. ՀՀ դրամ կամ 28.2%) և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերին (198.3 մլն. ՀՀ դրամ կամ 9.3%):

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ընդհանուր վարչական ծախսերն ավելացել են 2.6%-ով (30.5 մլն. ՀՀ դրամով)՝ կազմելով 1.2 մլրդ. ՀՀ դրամ:

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկը ձևավորել է 464.4 մլն. ՀՀ դրամի զուտ շահույթ, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 617.3 մլն. ՀՀ դրամ շահույթ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները՝ բերված տարեկանի, կազմել են՝

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 5.1%

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 0.9%:

Հաշվետու եռամսյակի 464.4 մլն. ՀՀ դրամ շահույթի ձևավորման արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 263.7 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 350.6 ՀՀ դրամի դիմաց:

Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալները, որոնք իրենց արդյունքներով արտացոլվում են Կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտներում, կազմել են 143.3 մլն. ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի՝ 165.4 մլն. ՀՀ դրամի համեմատ: Վճարահաշվարկային գործառնությունների ծառայություններից է կոմունալ վճարումների հավաքագրումը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 390.8 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 4,9 մլրդ. ՀՀ դրամ:

2018թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում Բանկի հաճախորդների քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 757-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել՝ 7,045-ով և կազմել՝ 112,625:

Վճարահաշվարկային գործառնություններ

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 201.1 մլրդ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 152.1 մլրդ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվը կրճատվել է 1.3%-ով (1,968 հատով)՝ կազմելով 146,563 հատ, որից 91,028-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, 53,335-ը՝ MasterCard և Visa Card միջազգային պլաստիկ քարտերին, 2,200-ը՝ Diners Club միջազգային պլաստիկ քարտերին:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2018 թվականի 2-րդ եռամսյակ	2017 թվականի 2-րդ եռամսյակ
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	464,356	617,295
Սեփական կապիտալի միջին մեծություն	36,074,021	33,677,735
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	**5.1**	**7.3**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	464,356	617,295
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	210,778,754	194,174,365
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	**0.9**	**1.3**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	464,356	617,295
Գործառնական եկամուտ	2,358,864	2,444,892
Զուտ շահույթի մարժա (NPM), %	**19.7**	**25.2**

Գործառնական եկամուտ	2,358,864	2,444,892
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	210,778,754	194,174,365
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	**4.5**	**5.0**
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	210,778,754	194,174,365
Սեփական կապիտալի միջին մեծություն	36,074,021	33,677,735
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	**5.8**	**5.8**
Զուտ տոկոսային եկամուտ	1,800,753	1,794,190
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	174,031,465	149,110,543
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	**4.1**	**4.8**
Տոկոսային եկամուտ	3,941,419	3,930,012
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	174,031,465	149,110,543
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	**9.1**	**10.5**
Տոկոսային ծախսեր	2,140,666	2,135,822
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	172,384,346	156,407,012
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	**5.0**	**5.6**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	464,356	617,295
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	1,760,731	1,760,731
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), *ՀՀ դրամ*	**263.7**	**350.6**
Սպրեդ, %	**4.0**	**5.0**

Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով, ուստի Բանկը 2018թ.-ի համար կարևորում է հետևյալ առաջնահերթությունները.

1. Բանկի գործունեության արդյունավետության բարձրացում,
2. թվային բանկային ծառայությունների զարգացում (Digital Banking),
3. ներդրումային բանկային ծառայությունների զարգացում (Investment Banking),
4. հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի (CRM) զարգացում,
5. կենտրոնացում ոչ տոկոսային եկամուտ ապահովող ծառայությունների վրա,
6. վաճառքի մեխանիզմների վերանայում և զարգացում,
7. անձնակազմի կառավարման քաղաքականության ներքո համապատասխան ներքին իրավական ակտերի մշակում և ներդրում,
8. սպասարկման որակի շարունակական բարելավում,
9. մասնաճյուղերի արդիականացում և գործունեության արդյունավետության բարձրացում: